Հաստատում եմ
Տնօրեն Ն. Տոդանյան
01.09.2023թ.

Ստուգված է
Տարրական մ/մ
Նախագահ՝ Կ.Չիբուխչյան

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թ.57 հիմնական դպրոց

2023-2024 ուստարի
Երաժշտության
թեմատիկ պլանավորում

Դասարան՝ 1-ին

Ուսուցիչ՝ Ա. Բարեղամյան

Դաս	Թեմա - 1-1 Երաժշտական տնակի բնակիչները /17 ժամ/	ժամ
Նպատակ	• Զարգացնել ճիշտ երգելու, խմբային երգեցողության ժամանակ լսելու, ձայնը խմբին հարմարեցնելու կարողություններ: • Երաժշտական տնակի բնակիչների՝ երգի, պարի և քայլերգի միջոցով շրջապատը ճիշտ, գեղեցիկ ընկալել: • Երաժշտության միջոցով հաղորդակցվելու, հույզեր և զգացմունքներ արտահայտելու, բնության հետ կապը զգալու կարողությունների ձևավորում:	
Վերջնարդյունքները	• Երաժշտական տնակի բնակիչների՝ երգի, պարի, քայլերգի ճանաչում, կատարումների, ունկնդրման նյութերի, խաղերի, գունապատկերման միջոցով: • Բնական և մանկական հարվածային նվագարաններով նվագակցություն: • Զարկ, ռիթմ, տեմպ հասկացությունների ընկալումը, կիրառումը մանկական ժողովրդական երգերում: • Երգերի, պարերի և քայլերգերի հեղինակների՝ կոմպոզիտոր, բանաստեղծ, կատարող և ունկնդիր հասկացությունների մասին իմացություն: • Երաժշտական հեքիաթի մասին իմացություն, բեմականացված կատարման և ներկայացման կարողություն:	
1,2	Մազմանյան- «Ողջույն դպրոց» երգի ուսուցում: Ա.Խաչատրյան «Արևելյան պարի» ունկնդրում մանկական ալբոմից: Երաժշտության ունկնդրում, երաժշտառիթմական և պարային շարժումներ, «Երաժշտական արկղիկներ» խաղ:	2
3,4	Լուսինյան-«Զանգն առաջին» երգի ուսուցում, «Դու մեր դպրոց սիրասուն» երգի ունկնդրում: Գրագետ կանոններով ունկնդրում, երաժշտական նյութի մեկնաբանում գունապատկերմամբ, խաղի միջոցով երգի, պարի, քայլերգի որոշում:	2
5,6,7	Հայկական ժող. երգերի՝ «Գառնուկ», «Ժամանակդ խնայիր» ուսուցում, Չթչյան- «Շնիկի դասը» երգի ունկնդրում: Բնական և մանկական հարվածայինների միջոցով նվագակցում, կարճ և երկար հնչյունների տարբերակում խաղով՝ «Հետևիր ինձ»:	3
8,9,10	Հայկական ժող.՝ «Սագիկ», «Օրոր» երգերի ուսուցում, Ռ. Պետրոսյանի – «Տատիկի օրորը»՝ ունկնդրում: Ժողովրդական երգերի արտահայտիչ կատարում, կերպա-	3

	բային ներկայացում, նվագակցություն… Կոմպոզիտոր, բանաստեղծ, ունկնդիր, կատարող հասկացությունների ընկալում արտային խաղով. «Ո՞վ եմ…»	
11,12	**Աշնան գույները երաժշտության մեջ:** Դ. Ղազարյան-«Աշուն եկավ», Հ. Օհանյան-«Նախշուն աշուն» երգերի ուսուցում, Ա. Մանուկյանի «Աշուն» և այլ աշնան մասին երգերի ունկնդրում: Բնության և երաժշտության կապի, նույնական հնչողության և նկարագրության ձևավորում. խաղ՝ «Կաթկթոց»:	2
13,14	Կոմիտաս «Անձրևն եկավ» ժող. երգի երգչախմբային մշակման ունկնդրում, հայկ. Ժող. «Անձրև, անձրև» երգի ուսուցում: Խմբային երգեցողություն՝ միմյանց լսելով, մեներգի և խմբերգի ընկալում ունկնդրմամբ: Խաղ՝ «Թաքցնենք և գտնենք երգը»:	2
15, 16,17	Ա.Լուսինյան «Ուլիկը» մանկական երաժշտական հեքիաթի ունկնդրում, ուսուցում: Թեմայի ամփոփումը կազմակերպել երաժշտական հեքիաթի դիտման, ներկայացման, դերերգերի ունկնդրման և արտահայտիչ կատարման միջոցով. ստեղծել կերպարային ներկայացում:	3

Դաս	**Թեմա - 1-2 Երաժշտությունը և մենք /16 ժամ/**	ժամ
Նպատակ	• Զարգացնել ճիշտ երգելու, խմբային երգեցողության ժամանակ լսելու, ձայնը խմբին հարմարեցնելու կարողություններ: • Երաժշտական տնակի բնակիչների՝ երգի, պարի և քայլերգի միջոցով շրջապատը ճիշտ, գեղեցիկ ընկալել: • Երաժշտության միջոցով հաղորդակցվելու, հույզեր և զգացմունքներ արտահայտելու, բնության հետ կապը զգալու կարողությունների ձևավորում:	
Վերջնարդյունքները	• Երաժշտական տնակի բնակիչների՝ երգի, պարի, քայլերգի ճանաչում, կատարումների, ունկնդրման նյութերի, խաղերի, գունապատկերման միջոցով: • Բնական և մանկական հարվածային նվագարաններով նվագակցություն: • Ձարկ, ռիթմ, տեմպ հասկացությունների ընկալումը, կիրառումը մանկական ժողովրդական երգերում: • Երգերի, պարերի և քայլերգերի հեղինակների՝ կոմպոզիտոր, բանաստեղծ, կատարող և ունկնդիր հասկացությունների մասին իմացություն: • Երաժշտական հեքիաթի մասին իմացություն, բեմականացված կատարման և ներկայացման կարողություն:	
18,19	Նաղդյանի «Երևան» երգի ուսուցում, Բաբաջանյան «Ազգ փառապանծ» երգի ունկնդրում:	2
20,21	Հայկ. ժող. «Արև-արև» և «Վարդի ծառ» երգերի ուսուցում, Է. Միրզոյանի «Մարիամի խաղը» մանրանվագի ունկնդրում մանկական ալբոմից:	2
21,22	Հայկ. ժող. «Խնոցի» և «Մառան մտա» երգերի ուսուցում, Չթչյանի «Ձիախաղ» մանրանվագի ունկնդրում:	2
22,23	Լուսինյան «Ուրախ առավոտ» երգի ուսուցում, ունկնդրում՝ Մանուկյան «Ծիտիկի օրորը»:	2
24,25	Ունկնդրում՝ Ա.Խաչատրյանի «Մանկական ալբոմից», Գալիկյանի «Հավիկ» երգի ուսուցում:	2
26,27,28	**Նոր տարվան նվիրված երգեր.** Շահզադեյան «Զրնգ, զրնգ, զրնգ», Ամերիկյան «Jingle bells» երգերի ունկնդրում, Հայկ. ժող. «Նոր տարի» երգի ուսուցում:	3
28,29,	Ա.Շահզադեյան «Տոնածառ», Մ.Միրզայան «Տոնածառ», Ռ. Ամիրխանյան «Նոր տարվա հանդես» երգերի ունկնդրում, Ա. Շահզադեյան «Զրնգ, զրնգ, զրնգ» և «Արի, նոր տարի»	2

	երգերի ուսուցում:	
30	Կիսամյակի ամփոփումը կազմակերպել	1
Դաս	**Թեմա - 1-3 Զբոսանք երաժշտության աշխարհում. /17 ժամ/**	ժամ
Նպատակ	• Զարգացնել անսամբլային կատարման որակներ, մաքուր ունի-սոնային երգեցողություն: • Զարգացնել երաժշտական ստեղծագործության տեմպը, բնույթը, տրամադրությունը, ուժգնության փոփոխությունները, ռիթմը զգալու կարողությունները: • Ձևավորել երաժշտալսողական պատկերացումները, առանձին ֆրազների կամ ռիթմական պատկերների զգացողություն, երաժշտառիթմական կամ պարային մեկնաբանություններ կա-տարելու որակներ:	
Վերջնարդյունքները	• Երաժշտական տնակի բնակիչների՝ երգի, պարի, քայլերգի հետ զբոսանքի արդյունքում ունկնդրում, խաղեր, ռիթմական նվա-գակցություն ժողովրդական երգերի և դասական ստեղծագոր-ծությունների հնչյունների ներքո: • Հնչողության ուժգնության, ֆրազի ընկալում և վերարտադրում, հնչյունների տևողության վանկային անվանումներով կատա-րում: • Համապատասխան երգերի միջոցով եռաստիճան հնչյունաշարի ամրակայում: • Երգչային ձայների ճանաչում և տարբերակում:	
31, 32	Ս. Գալիկյան «Զմռան երգ» և ժող. «Զմեռ» երգերի ուսուցում: Ալ.Սպենդիարյան «Քայլերգ» և Պ. Չայկովսկի-«Փաթիլների պարը» ունկնդրում: Երաժշտության ունկնդրում, երաժշտառիթմական և պարա-յին շարժումներ՝ բնույթին համապատասխան: Մեղեդի հասկացության հետ ծանոթություն. «<Մեղեդի-խոսք» խաղով ամրակայում:	2
33,34	«Շալախո» և «Ուզունդարա» ժող. պարերի ունկնդրում: Պարերի դիտում, տղաների և աղջիկների թիմային խաղ՝ պարային տարրերի հորինում և կատարում: Ռիթմական խատկերներով անցած երգերի կատարում:	2
35, 36, 37,	«Պսակ-պսակ» պարերգի ունկնդրում: Կոմիտաս «Ունաբի» դաշնամուրային պարի ունկնդրում: «Հանիկ նայ» ժող. երգի ուսուցում: Ձեռքի նշաններով անցած և նոր երգերի կատարում, ռիթ-մական քարտերով պատկերի ճանաչում: Պարային համա-պատասխան շարժումներով պարերի և պարերգերի	3

	կատարում:	
38,39,40	Ա. Խաչատրյան «Հեծելազոր» պիեսի ունկնդրում: «Մեր բաջ բանակ» երգի ուսուցում, բանակին նվիրված քայլերգերի ունկնդրում… Արտահայտիչ կատարում, երաժշտառիթմական մեկնաբանություններ:	3
41,42,43	Մենապար և խմբապար հասկացությունների ծանոթություն. «Ծաղիկ ջան» երգի ուսուցման ժամանակ պարային տարրերի կիրառում: Կոմիտասի «Մարալի» պարի ունկնդրում, անցած պարերի ունկնդրմամբ նոր հասկացության խաղային տարբերակում:	3
44,45	Ա. Լուսինյան «Գարնան սպասում», Ռ. Մելիքյան «Գարուն եկավ» երգերի ունկնդրում: «Գարուն է», «Վախկոտ կատուն» պարերգերի ուսուցում. ձեռքի նշաններով կատարում, պարային տարրերի հորինում:	2
46,47	Անցած երգերի, պարերի և պարերգերի կատարման և ունկնդրման, խաղային տարբերակներով ձեռքի նշանների և պարային շարժումների համապատասխան ուղեկցության միջոցով թեմայի ամփոփում:	2
Դաս	**Թեմա - 1-4 Երաժշտական դիմակահանդես /21 ժամ/**	Ժամ
Նպատակ	• Հայկական ժողովրդական, ինչպես նաև բազմազգ կոմպոզիտորական կերպարային մանրանվագների, երգերի, պարերի և քայլերգերի ուսուցմամբ և ունկնդրմամբ, խաղային իրավիճակներում վերլուծությունների միջոցով սովորել նկատել և տարբերակել «դիմակավորված երաժշտության» առանձնահատկությունները: • «Դիմակավորված երաժշտություն» կատարելիս կամ ունկնդրելիս համապատասխան տրամադրություն ստեղծելու և փոխանցելու կարողություն ձևավորել: • Կերպարայնությունը երաժշտական կատարումներում արտահայտչամիջոցների՝ ռիթմի (կարճ և երկար տևողություններ), տեմպի (դանդաղ, միջին, արագ), ուժգնության (ուժեղ, մեղմ, հանգիստ) միջոցով զգալու կարողություն ձևավորել:	
Վերջնարդյունքները	• Երաժշտության բնույթին համապատասխան երաժշտառիթմիկ և պարային շարժումների կատարման հմտություններ: • Երաժշտական կերպարային մտածողության և դրանք	

	գունապատկերմամբ ներկայացնելու կարողություն: • Մեղեդու և ռիթմական պատկերների, ինչպես նաև խոսքի և առոգանության ճիշտ վերարտադրում:	
48, 49	Հայկ. ժող. երգեր «Լորիկ», «Վեր վերի»: Ունկնդրում՝ Է. Գրիգ «Ծիտիկ», Կոմիտաս «Շուշիկի պար»: Խաղերի բազմազանություն. «Երգող ձայնաստիճաններ»:	2
50,51	Լուսինյան «Մայրիկիս տոնը», հայկ. Ժող. երգ «Գարուն»: Ունկնդրում՝ «Կաքավիկ», «Հաբրբան» լարային քառյակի կատարմամբ:	2
52, 53	Լուսինյան «Թիթեռնիկ», Ռուսական ժող. երգ «Վեր, վեր, գյուղից վեր»: Ուսուցանվող երգերի կատարումների բեմականացում իմպրովիզացիոն հմտությունների կիրառմամբ: Ունկնդրում- Ռախմանինով «Իտալական պոլկա»:	2
54,55	Ունկնդրման նյութ՝ Գլինկա «Պոլկա»՝ պարային և երաժշտառիթմիկ շարժումներով: Երգի ուսուցում՝ ժող. «Հոյ նար»: Խաղային բազմազանություն... «Երգող պատկերներ»:	2
56,57	Երգի ուսուցում՝ ժող. «Ձախորդ արջը»՝ կերպարային բեմա-կանացմամբ: Խաղային բազմազանություն... «Դիմակավորում»՝ օգտվելով «կերպարային պատկերներ» քարտերից գտնել երգին համա-պատասխանող կերպարին:	2
58,59	Ունկնդրման նյութ՝ Չայկովսկի «Փոքրիկ կարապների պարը»՝ պարային և երաժշտառիթմիկ շարժումներով: Երգի ուսուցում՝ ժող. «Հավի ճիվ»: Խաղեր արտահայտչամիջոցների ամրապնդման և կիրառ-ման շուրջ. «Ուրախ, տխուր», «Մի շտապիր»...	2
60	Երգի ուսուցում՝ ժող. «Թռի, թռի»: Խաղային բազմազանություն... «Երգող ձայնաստիճաններ»:	1
61,62	Ունկնդրման նյութ՝ Ա. Խաչատրյան «Ռուսական պար»՝ պարային և երաժշտառիթմիկ համապատասխան շարժում-ներով: Երգի ուսուցում՝ Միրզայան «Անբախտ փիսոն»: Կերպարային գունապատկերում:	2
63,64	Երգի ուսուցում՝ ժող. «Հանիկ նայ»: Ժող. և կոմպոզիտորական երգերի նմանություն և տարբե-	2

	րություններ. «2 արկղիկ» խաղով:	
65,66	Ունկնդրման նյութ՝ Ա. Խաչատրյան «Ցատկապարան»՝ պարային և երաժշտառիթմիկ համապատասխան շարժումներով: Երգի ուսուցում՝ Գ. Չթչյան «Իմ պապիկի Հայաստան»: Մաքուր և հուզական, կերպարային կատարումներ՝ համապատասխան պարային և երաժշտառիթմիկ շարժումներով:	2
67	Թեմայի ամփոփում. Ժող. և կոմպոզիտորական երգերի նմանություն և տարբերություններ. «2 արկղիկ» խաղով:	1
68	Խաղ - ներկայացում՝ Երաժշտական դիմակահանդես: Անցած երգերի, պարերի և քայլերգերի կերպարային կատարումներ՝ խաղային իրավիճակներում ռիթմական նվագակցության և պարային շարժումների ուղեկցությամբ, արտահայտչամիջոցների կիրառմամբ: Թեմայի ամփոփումը կազմակերպել «դիմակահանդեսի» միջոցով՝ անցած ժող. և կոմպոզիտորական երգերի, պարերի, քայլերգերի և մանրանվագների կիրառմամբ:	1

Թեմատիկ պլան

Դաս 1-2. Երաժշտական տնակի բնակիչները

Մազմանյան-«Ողջույն դպրոց» երգի ուսուցում:

Ա.Խաչատրյան «Արևելյան պարի» ունկնդրում Մանկական ալբոմից:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ կա երաժշտական տնակում. «Ովքե՞ր» են այնտեղ բնակվում…
2. Որո՞նք են ճիշտ երգեցողության կանոնները...

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. երաժշտական տնակում ապրում են երգը, պարը և քայլերգը՝ իրարից անբաժան:
2. որ պետք է երգել ուղիղ և ձիգ կեցվածքով, կլոր բերանով, երգելիս պետք է լսել միմյանց և հարմարեցնել սեփական ձայնը խմբին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ճանաչել երգն ու պարը:
2. Երգել մեկ կամ երկու մանկական երգ:

Թեմատիկ պլան

Դաս 3-4.

Լուսինյան-«Զանգն առաջին» երգի ուսուցում,
«Դու մեր դպրոց սիրասուն» երգի ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են կոմպոզիտոր, բանաստեղծ, կատարող և ունկնդիր հասկացությունները:
2. Որո՞նք են բնական և մանկական հարվածային նվագարանները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. երաժշտական ստեղծագործությունը ստեղծվում է կոմպոզիտորի, բանաստեղծի շնորհիվ, կատարվում կատարողների կողմից ունկնդրի համար:
2. որ բնական նվագարանները ծափն է, դոփյունը, ճտոցը…, իսկ մանկական հարվածայինները ծնծղան, շրխկանները, մետաղաֆոնը, կաստանետը…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Խաղային քարտերում առանձնացնել կոմպոզիտոր, բանաստեղծ, կատարող և ունկնդիր հասկացությունները:
2. Բնական և մանկական հարվածայիններ նվագարաններ ցույց տա, զարկի նրանցով ռիթմական պատկերներ:

Թեմատիկ պլան

Դաս 5-6.

Հայկական ժող. երգերի՝ «Գառնուկ», «Ժամանակդ խնայիր» ուսուցում,
Չթչյան-«Շնիկի դասը» երգի ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ ժող. կամ կոմպոզիտորական երգ կարող եք կատարել:
2. Ի՞նչ տարբերություն ժող. և կոմպոզիտորական երգերի միջև:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Գառնուկ, Իմ սագիկ, Իմ շվի, Օրոր, Ժամանակդ խնայիր… երգերը:
2. Կոմպոզիտորական երգը ստեղծում են կոմպոզիտորը և բանաստեղծը, իսկ ժողովրդականը՝ ժողովուրդը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Կատարել մեկ կամ երկու ժող. և կոմպոզիտորական երգեր և պարեր:
2. Ներկայացնել ժող. և կոմպոզիտորական երգերի տարբերությունը:

Թեմատիկ պլան

Դաս 7-8

Հայկական ժող.՝ «Սագիկ», «Օրոր» երգերի ուսուցում,
Ռ. Պետրոսյանի – «Տատիկի օրորը»՝ ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ ժողովրդական նվագարան գիտեք:
2. Ի՞նչ է երաժշտության կատարման արագությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. Որ շվին ժողովրդական նվագարան է, որի մասին ժող. մանկական երգ կա:
2. որ երաժշտության կատարման արագությունը կոչվում է տեմպ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. ներկայացնել ժողովրդական նվագարան:
2. ճանաչել երգի տեմպը:

Թեմատիկ պլան

Դաս 9-10. Աշնան գույները երաժշտության մեջ:

Դ. Ղազարյան-«Աշուն եկավ»,

Հ. Օհանյան-«Նախշուն աշուն» երգերի ուսուցում,

Ա. Մանուկյանի «Աշուն» և այլ աշնան մասին երգերի ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր երգերն են արտահայտում աշնան տրամադրություն:
2. Ի՞նչ երգեր գիտեք բնության մասին.կատարեք համապատասխան տրամադրությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. որ կան աշնանը նվիրված երգեր՝ «Աշուն եկավ», «Նախշուն աշուն», «Աշուն»:
2. որ բնության երևույթները նկարագրող երգեր կան.Արև-արև, Անձրև եկավ…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Աշնան մասին մեկ կամ երկու երգ կատարել՝ համապատասխան տրամադրությամբ:
2. Բնության երևույթները նկարագրող մեկ կամ երկու երգ կատարել:

Դաս 11-12.

Կոմիտաս «Անձրևն եկավ» ժող. երգի երգչախմբային մշակման ունկնդրում, հայկ. Ժող. «Անձրև, անձրև» երգի ուսուցում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր երգերն են արտահայտում աշնան տրամադրություն:
2. Ի՞նչ երգեր գիտեք բնության մասին.կատարեք համապատասխան տրամադրությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար).

1. որ կան աշնանը նվիրված երգեր՝ «Աշուն եկավ», «Նախշուն աշուն» «Աշուն»:
2. որ բնության երևույթները նկարագրող երգեր կան.Արև-արև, Անձրև եկավ…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար).

1. Աշնան մասին մեկ կամ երկու երգ կատարել՝ համապատասխան տրամադրությամբ:
2. Բնության երևույթները նկարագրող մեկ կամ երկու երգ կատարել:

Թեմատիկ պլան

Դաս 13-15.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է երաժշտական հեքիաթը:
2. Ի՞նչ երաժշտական հեքիաթ գիտեք, կատարեք մեկ կամ մի քանի դերերգեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. երաժշտական հեքիաթը սովորական հեքիաթից տարբերվում է միայն նրանով, որ երաժշտական հեքիաթում հերոսները ներկայանում են երգով ու պարով:
2. Մանկական երաժշտական հեքիաթներից է Ա. Լուսինյանի «Ուլիկը», որտեղ կան ուլիկի, մայր այծի, գայլի դերերգեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Նկարագրել երաժշտական հեքիաթը և հերոսներին:
2. Կատարել մեկ կամ մի քանի դերերգ՝ արտահայտիչ, բեմականացված…

Թեմատիկ պլան

Դաս 16-17. Երաժշտությունը և մենք

Նաղդյանի «Երևան» երգի ուսուցում,
Բաբաջանյան «Ազգ փառապանծ» երգի ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է «Ազգ փառապանծ» երգի հեղինակը, էլ ի՞նչ հայ կոմպոզիտորներ գիտեք…
2. Մեր երկրի մասին ի՞նչ երգեր գիտեք...

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Որ «Ազգ փառապանծ» երգի հեղինակը Առնո Բաբաջանյանն է, որ հայ կոմպոզիտորներ են նաև Ա. Խաչատրյանը, Կոմիտասը, Գ. Չթչյանը, Ա. Լուսինյանը…
2. Մեր հայրենիքին նվիրված շատ երգեր կան՝ Երևան, Ազգ փառապանծ…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ճանաչել Ա. Բաբաջանյանին և մի քանի հայ կոմպոզիտորներին նկարով:
2. Երգել մեկ կամ երկու երգ մեր հայրենիքի մասին:

Թեմատիկ պլան

Դաս 18-19.

Հայկ. ժող. «Արև-արև» և «Վարդի ծառ» երգերի ուսուցում,
Է. Միրզոյանի «Մարիամի խաղը» մանրանվագի ունկնդրում մանկական ալբոմից:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ մանկական ժող.երգեր գիտեք. կատարեք 1-2 երգ՝ ծափելով կարճ և երկար հնչյունները:
2. Ինչպե՞ս կնկարագրեք ունկնդրած մանրանվագը՝ պարային, ռիթմական շարժումներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. «Արև-արև», «Իմ շվի», «Գառնուկ» …քայլ, վազել:
2. երաժշտական ստեղծագործությունները պետք է ունկնդրել լուռ, ուշադիր և պարային, երաժշտառիթմական համապատասխան շարժումներով հաղորդել նրա տրամադրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. կատարել «Արև-արև», «Իմ շվի», «Գառնուկ» մանկական ժող. երգերը…քայլ, վազել վանկերով ծափել կարճ և երկար հնչյունները:
2. ունկնդրած մանրանվագի բնույթին բնորոշ պարային և երաժշտառիթմական շարժումներով կատարել մեկնաբանություն:

Դաս 20-21.

Հայկ. ժող. «Խնոցի» և «Մառան մտա» երգերի ուսուցում, Չթչյանի «Չիախաղ» մանրանվագի ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ մանկական ժող.երգեր գիտեք. կատարեք 1-2 երգ՝ ծափելով կարճ և երկար հնչյունները:
2. Ինչպե՞ս կնկարագրեք ունկնդրած մանրանվագը՝ պարային, ռիթմական շարժումներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. «Խնոցի», «Մառան մտա»…քայլ, վա-զել:
2. երաժշտական ստեղծագործությունները պետք է ունկնդրել լուռ, ուշադիր և պարային, երաժշտառիթմական համապատասխան շարժումներով հաղորդել նրա տրամադրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. կատարել «Խնոցի», «Մառան մտա» մանկական ժող. երգերը…քայլ, վա-զել վանկերով ծափել կարճ և երկար հնչյունները:
2. ունկնդրած մանրանվագի բնույթին բնորոշ պարային և երաժշտառիթմական շարժումներով կատարել մեկնաբանություն:

Դաս 22-23.

Լուսինյան «Ուրախ առավոտ» երգի ուսուցում,
Ունկնդրում՝ Մանուկյան «Ծիտիկի օրորը»:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչո՞վ են տարբերվում ժողովրդական և կոմպոզիտորական մանկական երգերը:
2. Ի՞նչ տեմպ և բնույթ ունի օրորոցային երգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. կոմպոզիտորական երգերը ստեղծում են կոմպոզիտորները, իսկ ժող.երգերը ժողովրդի կողմից:
2. որ օրորոցային երգը մեղմ է, հանդարտ, ունի դանդաղ տեմպ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. ներկայացնել 1-2 ժողովրդական և կոմպոզիտորական մանկական երգեր:
2. ներկայացնել 1-2 օրորոցային երգ՝ կատարելով համապատասխան մեկնաբանություն բնույթին և տեմպին բնորոշ:

Թեմատիկ պլան

Դաս 24-25.

Ունկնդրում Ա. Խաչատրյան «Մանկական ալբոմից»,
Գալիկյան «Հավիկ» երգի ուսուցում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ զգացողություններ է արտահայտում երաժշտությունը:
2. Ի՞նչ երգեր գիտեք բնության մասին.կատարեք համապատասխան տրամադրությամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Երաժշտությունն արտահայտում է տարբեր զգացողություններ. ուրախություն, հուզմունք, հրճվանք, տխրություն, նաև նկարագրում է բնության երևույթներ:
2. Բնությունը նկարագրվում է երաժշտության մեջ. «Գարնան սպասում», «Ուրախ առավոտ»…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Երաժշտական կատարումների միջոցով համապատասխան տրամադրություններ ներկայացնել:
2. Բնության երևույթները նկարագրող մեկ կամ երկու երգ կատարել:

Դաս 26-27.

Շահզադեյան «Զընգ, զընգ, զընգ» և «Տոնածառ»,
Մ. Միրզայան «Տոնածառ»,
Ռ. Ամիրխանյան «Նոր տարվա հանդես», ամերիկյան «Jingle bells» երգերի ունկնդրում,
Հայկ. ժող. «Նոր տարի»,
Ա. Շահզադեյան «Արի, նոր տարի» երգերի ուսուցում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ամանորյա երգեր գիտեք:
2. Ինչպիսի՞ բնույթ և տրամադրություն ունեն այդ երգերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. կան ամանորյա երգեր՝ «Զընգ, զընգ, զընգ», «Jingle bells», «Տոնածառ ջան», «Արի, նոր տարի» …
2. այդ երգերն արտահայտում են հրճվանք, խինդ և ունեն տոնական տրամադրություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. կատարել 2-3 ամանորյա երգեր՝ համապատասխան տրամադրությամբ:
2. երգերի բնույթն ու տրամադրությունը ներկայացնի համապատասխան պարային և երաժշտառիթմիկ շարժումներով:

Թեմատիկ պլան

Դաս 30.

Անցած երգերի և պարերի ամփոփ ներկայացում՝ համապատասխան նվագակցությամբ, պարային մեկնաբանությամբ…

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է երաժշտական տեմպը, բնույթը, ռիթմը:
2. Ինչպե՞ս են կարճ և երկար հնչյունները զարկվում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Տեմպը երաժշտության կատարման արագությունն է, բնույթը՝ նրա հաղորդած տրամադրությունը, իսկ ռիթմը՝ կարճ և երկար հնչյունների հերթագայումը:
2. կարճ և երկար հնչյունները զարկվում են քայլ և վա-զել վանկերին համապատասխան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Նկարագրել երաժշտական տեմպը, բնույթը, ռիթմը:
2. Կատարման ընթացքում զարկել կարճ և երկար հնչյունները:

Դաս 31-32. Զբոսանք երաժշտության աշխարհում.

Ս. Գալիկյան «Ձմռան երգ» և ժող. «Ձմեռ» երգերի ուսուցում:

Ալ.Սպենդիարյան «Քայլերգ» և Պ. Չայկովսկի «Փաթիլների պարը» ունկնդրում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է քայլերգը. ի՞նչ բնույթ ունեն ունկնդրվող ստեղծագործությունները:
2. Ինչպե՞ս է հաղորդվում երաժշտական ստեղծագործության տրամադրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Քայլերգը երգ է, որը կատարում են քայլքի և համապատասխան զարկերի ուղեկցությամբ. ունկնդրվող ստեղծագործություններն ունեն քայլերգային բնույթ:
2. Ստեղծագործության բնույթը ներկայացնում ենք համապատասխան տրամադրությամբ՝ պարային, ռիթմական շարժումներով, դիմախաղով…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ընկալել երաժշտական նյութի բնույթը:
2. Ընկալել տրամադրությունն ու կատարել համապատասխան մեկնաբանությամբ:

Թեմատիկ պլան

Դաս 33-34.

«Շալախո» և «Ուզունդարա» ժող. պարերի ուսուցումը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ առանձնահատկություն և տարբերություն ունեն այս պարերը:
2. Ի՞նչ է ժողովրդական պարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Պարերից մեկը աղջիկների, իսկ մյուսը տղաների պար է:
2. ժողովրդական պարը ժող.երգի նման ժառանգում ենք ժողովրդից, այլ ոչ թե կոմպոզիտորից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Պարերը կատարել և մեկնաբանել համապատասխան շարժումներով և տրամադրությամբ. հորինել խարային տարրեր
2. Ճանաչել ժողովրդական մեկ կամ երկու պար:

Դաս 35-38.

«Պսակ-պսակ» պարերգի ունկնդրում:
Կոմիտաս «Ունաբի» դաշնամուրային պարի ունկնդրում:
«Հանիկ նայ» ժող. երգի ուսուցում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է պարերգը. ի՞նչ պարերգ գիտեք:
2. Ի՞նչ ընդհանրություն կա պարերգի և պարի միջև:
3. Ո՞ր ձայնաստիճաններն եք կարող ներկայացնել ձեռքի նշաններով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Պարերգը պարային շարժումների ուղեկցությամբ կատարվող երգ է. Դրանցից են «Պսակ-պսակը»
2. Պարերգը և պարը կատարվում են համապատասխան պարային տարրերի ուղեկցությամբ՝ տալով ստեղծագործության բնույթին բնորոշ մեկնաբանություն:
3. Ձեռքի նշաններով դո-ռե-մի և ռե-մի-ֆա եռաստիճան հնչյունաշարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Կատարել մեկ պարերգ:
2. Ներկայացնել մեկական պար և պարերգ՝ համապատասխան պարային տարրերի ուղեկցությամբ:
3. Ձեռքի նշաններով կատարել դո-ռե-մի և ռե-մի-ֆա եռաստիճան հնչյունաշարը:

Թեմատիկ պլան

Դաս 39-40

Ա. Խաչատրյան «Հեծելազոր» պիեսի ունկնդրում:
«Մեր քաջ բանակ» երգի ուսուցում, բանակին նվիրված քայլերգերի ունկնդրում…

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են արտահայտում բանակին նվիրված երգերը. ներկայացրեք 1-2 երգ:
2. Ո՞վ է Ա. Խաչատրյանը. ի՞նչ ստեղծագործություններ գիտեք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. բանակին նվիրված երգերը քայլերգային բնույթ ունեն, քաջություն, խրոխտություն են հաղորդում. դրանցից են «Մեր քաջ բանակ», «Լսիր զինվորին» երգերը:
2. Ա. Խաչատրյանը հայ անվանի կոմպոզիտոր է, գրել է բազմաժանր ստեղծագործություններ մեծերի և փոքրերի համար. Փոքրերի համար ունի «Մանկական ալբոմ», որից ունկնդրել ենք Հեծելազոր, Արևելյան պար պիեսները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Համապատասխան ներկայացնել բանակին նվիրված 1-2 երգ:
2. Ներկայացնել աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր Ա. Խաչատրյանին, ճանաչի նրա 1-2 ստեղծագործություն:

Դաս 41-42

Խմբապար և մենապար.
Ունկնդրում՝ Կոմիտաս «Մարալի»,
Հայկ. ժող. «Ծաղիկ ջան» երգը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է Կոմիտասը:
2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում խմբապարը և մենապարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Կոմիտասը հայ մեծ կոմպոզիտոր է, մշակել է հայկական ժող. երգեր, ստեղծել է պարեր:
2. Խմբապարն ու մենապարը պարերի տեսակներ են, կատարվում են համապատասխանաբար խմբով և մենակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ներկայացնի Կոմիտասին, ճանաչի հնչողությամբ նրա 1-2 պարերը:
2. Իմանա խմբապար և մենապար հասկացությունների մասին:

Թեմատիկ պլան

Դաս 43-44

Ա. Լուսինյան «Գարնան սպասում», Ռ. Մելիքյան «Գարուն եկավ» երգերի ունկնդրում: «Գարուն է», «Վախկոտ կատուն» պարերգերի ուսուցում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ժող. երգեր, պարեր կամ պարերգեր գիտեք. 1-2 օրինակ:
2. Ո՞ր եռաստիճան հնչյունաշարն է առկա «Վախկոտ կատուն» պարերգում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. «Վախկոտ կատու» պարերգը, «Ծաղիկ ջան» երգը, «Շալախո» և «Ուզունդարա» պարերը ժողովրդական են:
2. «Վախկոտ կատու» պարերգում առկա է ռե-մի–ֆա եռաստիճան հնչյունաշարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ճանաչել և կատարել 1-2 ժող. երգ, պար, պարերգ՝ համապատասխան տրամադրությամբ:
2. «Վախկոտ կատու» պարերգը կատարել ռե-մի–ֆա եռաստիճան հնչյունաշարի ձեռքի նշաններով:

Դաս 45.

Ամփոփում անցած երգերի, պարերի և պարերգերի կատարմամբ և ունկնդրմամբ:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ նոր հայ հեղինակներ ճանաչեցիք. Նշեք 1-2ին:
2. Ինչ է ռիթմը. քարտերով ներկայացրեք ռիթմական պատկերներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Ա. Խաչատրյանը, Կոմիտասը հայ կոմպոզիտորներ են:
2. Ռիթմը կարճ(վազել) և երկար(քայլ) տևողությամբ հնչյունների հերթագայումն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Ներկայացնել 1-2 հայ կոմպոզիտորների:
2. Ճանաչել երգի ռիթմը՝ ռիթմական քարտային պատկերներով:

Դաս 46-47. Երաժշտական դիմակահանդես:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է երգը, պարը, քայլերգը:
2. Ի՞նչ երգեր, պարեր և քայլերգեր գիտեք.1-2ական:
3. Ինչո՞վ են երգերը, պարերը և քայլերգերը նման և տարբեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. երգը, պարը, քայլերգը երաժշտության 3 տեսակներն են:
2. ժող. և կոմպոզիտորական երգեր և պարեր.Մառան մտա, Վարդի ծառ, Ուրախ առավոտ, Շալախո, Ուզունդարա, Շուշիկի պար… քայլերգեր՝ Լսիր զինվորին, Հայրենիք…
3. երգերը, պարերը և քայլերգերը նման են և տարբեր տեմպով, տրամադրությամբ, բովանդակությամբ…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Տարբերել երգը, պարը և քայլերգը:
2. Ճիշտ կեցվածքով, մաքուր ինտոնացիայով կատարի երգեր, պարեր և քայլերգեր:
3. ներկայացնի երգերի, պարերի և քայլերգերի նմանություններ և տարբերություններ՝ ըստ տեմպի, տրամադրության, բովանդակության…

Դաս 48-49.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է երաժշտական ստեղծագործության բնույթը:
2. Կարո՞ղ եք ներկայացնել նույն բնույթի 2 ստեղծագործություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Երաժշտական ստեղծագործությունը կատարելիս կամ ունկնդրելիս պետք է ընկալել նրա բնույթը՝ ըստ արտահայտած զգացողությունների և տրամադրության:
2. Միևնույն զգացողություններն արտահայտող 2 ստեղծագործություն ունեն նույն բնույթը. Օրինակ՝Մայրիկի և բնության կամ հայրենիքի և զինվորի մասին երգերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Երաժշտական ստեղծագործությունը կատարելիս կամ ունկնդրելիս զգա և հաղորդի ստեղծագործության բնույթը:
2. Կատարել «Հայրենիք» և «Լսիր զինվորին» երգերը՝ արտահայտելով միևնույն բնույթը:

Թեմատիկ պլան

Դաս 50-51.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է նշանակում երգի բեմականացում:
2. Ի՞նչ նվագարաններ գիտեք...
3. Ի՞նչ է ֆրազը. առանձին ֆրազներով կատարեք «Վեր, վեր, գյուղից վեր» ռուսական երգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Ըստ ստեղծագործության կերպարայնության կարելի է այն կատարել բեմականացմամբ՝ բնութագրելով կերպարներինը:
2. Կան մանկական հարվածային և բնական նվագարաններ, նաև լարային:
3. Մեկ շնչով կատարվող երգի հատվածը 1 ֆրազն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Բեմականացված կատարել «Վեր, վեր, գյուղից վեր» կամ «Թիթեռնիկ» երգերը:
2. Ներկայացնել մանկական նվագարաններ, ճանաչել հնչողությամբ նաև լարային նվագարաններ:
3. առանձին ֆրազներով կատարել «Վեր, վեր, գյուղից վեր» ռուսական երգը:

Դաս 52-53.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ժող. երգեր գիտեք. ներկայացրեք համապատասխան կերպարայնությամբ:
2. Որո՞նք են ճիշտ երգեցողության կանոնները...
3. Որո՞նք են ժող. երգի առանձնահատկությունները.նշեք ձեզ ծանոթ ժող.նվագարանները:
4. Ինչպե՞ս կարող եք նկարագրել ժող. երգերի կամ պարերի բնույթը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. որ կան ժող. երգեր, որոնք ճիշտ և համապատասխան կերպարայնությամբ ու առոգանությամբ պետք է կատարել՝ ներկայացնելով բնույթը:
2. որ ճիշտ երգեցողության կանոններին պետք է հետևել ուղիղ և ձիգ կեցվածքով, շնչառությամբ ...
3. որ այն երգերը, որոնք ստեղծվում են ժողովրդի կողմից կոչվում են ժողովրդական, որոնք հնչում են ժող. նվագարաններով. շվի, դհոլ, դափ...
4. որ ժող. երգերի կամ պարերի բնույթը կարելի է ներկայացնել համապատասխան պարային կամ երաժշտառիթմական շարժումներով, գունապատկերմամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Տարբերել կատարվող ժող. երգի բնույթը:
2. Երգել ճիշտ կեցվածքով, մաքուր ինտոնացիայով:
3. 1-2 ժող. երգ կատարել՝ ներկայացնելով ժող.տարրերի առկայությունը. ժող.նվագարանները:
4. Ժող. երգերի կամ պարերի բնույթը ներկայացնել համապատասխան պարային կամ երաժշտառիթմական շարժումներով:

Դաս 54-55.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ երգեր, պարեր, քայլերգեր գիտեք, կարո՞ղ եք ներկայացնել գունապատկերման տարբերակով (կամ օգտվելով համապատասխան խաղային կերպարային քարտերից):
2. Ի՞նչ արտարտահայտչամիջոցներ գիտեք և ինչպե՞ս են դրանք անդրադառնում երաժշտական կատարումների վրա:
3. Ինչո՞վ են ձեզ հայտնի ժող. և կոմպոզիտորական ստեղծագործությունները նման և տարբեր:
4. Ի՞նչ ռիթմական նվագարաններ գիտեք, ինչպե՞ս կնվագակցեք ձեր սիրած կատարումը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. Որ կան ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր, որոնք ունեն նման կամ տարբեր բնույթներ և համապատասխան կերպարներ են արտացոլում:
2. որ կան երաժշտական արտահայտչամիջոցներ՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ), որոնց միջոցով զգում ենք ստեղծագործության բնույթը և համապատասխան տրամադրությամբ կատարում:
3. որ ժող. և կոմպոզիտորական ստեղծագործությունները նման կարող են լինել իրենց տրամադրությամբ, բնույթով, արտահայտչամիջոցներով, և տարբեր են, քանի որ ստեղծվում են մեկը ժողովրդի, մյուսը՝ կոմպոզիտորի կողմից:
4. որ կան մանկական հարվածային նվագարաններ, որոնցով կարող ենք ռիթմական նվագակցություն իրականացնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Թվարկել 1-2 անցած ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր՝ ներկայացնելով դրանք համապատասխան կերպարայնությամբ, պարային և ռիթմիկ շարժումներով:
2. Ներկայացնել երաժշտական արտահայտչամիջոցները՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ)՝ անցած կատարումներից 1-2ը համապատասխան արտահայտչամիջոցների կիրառմամբ կատարելով:
3. 1-2 ժող. և կոմպոզիտորական կատարումներ ներկայացնել՝ բացատրելով նրանց նման և տարբեր լինելու կարևոր պայմանը:

4. Հարվածային մանկական նվագարաններով՝ դափ, շրխկան, թմբուկ, կաստանետ...կատարել համապատասխան երգի կատարմանն ուղեկցող նվագակցություն:
3. Ստեղծել ինքնաշեն հարվածայիններ՝ ծանոթ երգերի, պարերի, քայլերգերի բնույթին համապատասխան նվագակցություն կատարելու համար:

Դաս 56-57.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ նվագարաններ գիտեք, ո՞ր կերպարների հետ եք նմանեցնում նրանց հնչողությունը:
2. Ի՞նչ արտահայտչամիջոցներ գիտեք և ինչպե՞ս են դրանք անդրադառնում երաժշտական կատարումների վրա:
3. Ինչո՞վ են առանձնանում երգերում,պարերում և քայլերգերում առկա կերպարները:
4. Ի՞նչ ռիթմական և ժողովրդական նվագարաններ գիտեք, ինչպե՞ս կնվագակցեք նվագարանային և ժողովրդական ստեղծագործությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար), որ

1. Որ կան ստեղծագործություններ, որոնք կատարվում են նվագարանների միջոցով.ամեն նվագարանի հնչողություն կարելի է համեմատել մեզ շրջապատող երևույթների հետ:
2. կան երաժշտական արտահայտչամիջոցներ՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ), որոնց միջոցով զգում ենք ստեղծագործության բնույթը և համապատասխան տրամադրությամբ կատարում:
3. որ երգերում,պարերում և քայլերգերում առկա են կերպարներ, որոնք ստեղծագործության բնույթին համապատասխան են:
4. կան մանկական հարվածային և ժողովրդական նվագարաններ, որոնցով կարող ենք ռիթմական նվագակցություն իրականացնել նվագարանային և ժողովրդական ստեղծագործությունների ժամանակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Թվարկել 1-2 նվագարանային ստեղծագործություններ՝ ներկայացնելով դրանք համապատասխան կերպարայնությամբ, պարային և ռիթմիկ շարժումներով:
2. Ներկայացնել երաժշտական արտահայտչամիջոցները՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ)՝ անցած կատարումներից 1-2ը համապատասխան արտահայտչամիջոցների կիրառմամբ կատարելով:
3. Երգերում,պարերում և քայլերգերում առկա կերպարները զգալ, արտահայտիչ և կերպարային ներկայացնելով ստեղծագործության բնույթը:

4. Հարվածային մանկական նվագարաններով՝ դափ, շրխկան, թնբուկ, կաստանետ... և ժողովրդական նվագարաններով՝ շվի, դուդուկ, դհոլ…կատարել համապատասխան նվագակցություն:

Դաս 58-59

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր գիտեք, որոնք կարող եք «գտնել» 3 արկղիկներում:
2. Ի՞նչ արտահայտչամիջոց է տեմպը, ինչպե՞ս է այն անդրադառնում ստեղծագործության բնույթի վրա:
3. Ի՞նչ հայտնի ժող. և կոմպոզիտորական երգեր գիտեք, որ նման են տեմպով:
4. Ի՞նչ նվագարաններով կնվագակցեք արագ, միջին և դանդաղ տեմպի կատարումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. որ կան ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր, որոնք խաղային իրավիճակներում պետք է տարբերակել և «բաշխել»՝ ըստ արկղիկների:
2. որ տեմպը երաժշտության կատարման արագությունն է արտահայտում և կարևորում է կատարման բնույթը՝ ստեղծելով համապատասխան տրամադրություն…
3. որ ժող. և կոմպոզիտորական ստեղծագործությունները կարող են նման լինել իրենց տեմպով՝ միատեսակ տրամադրություն, կերպարայնություն արտահայտելով:
4. որ արագ, միջին և դանդաղ տեմպի կատարումներն՝ ըստ ստեղծած տրամադրության կարող ենք նվագակցել՝ հաշվի առնելով տրամադրությունը, բնույթը…օրինակ՝ դանդաղ տեմպի կատարումը չենք կարող նվագակցել խրոխտ բնույթ փոխանցող թմբուկով…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Խաղային իրավիճակներում տարբերակել ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր:
2. Ներկայացնել երաժշտական կատարումը՝ համապատասխան տեմպով:
3. 1-2 ժող. և կոմպոզիտորական կատարումներ ներկայացնել՝ բացատրելով նրանց տեմպային նմանությունը և ըստ այդմ՝ բնույթի նմանությունը::
4. Կատարումներին համապատասխան նվագարաններ ընտրել նվագակցության համար:

Դաս 60.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ երգեր, պարեր, քայլերգեր գիտեք, որոնք կարող եք ներկայացնել համապատասխան կերպարայնությամբ:
2. Ի՞նչ արտահայտչամիջոցներ գիտեք և ինչպե՞ս են դրանք անդրադառնում երաժշտական կատարումների վրա:
3. Ինչո՞վ են ձեզ հայտնի ժող. և կոմպոզիտորական ստեղծագործությունները նման և տարբեր:
4. Ի՞նչ ռիթմական նվագարաններ գիտեք, ինչպե՞ս կնվագակցեք ձեր սիրած կատարումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար),

1. որ կան ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր, որոնք ունեն նման կամ տարբեր բնույթներ և համապատասխան կերպարներ են արտացոլում:
2. որ կան երաժշտական արտահայտչամիջոցներ՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ), որոնց միջոցով զգում ենք ստեղծագործության բնույթը և համապատասխան տրամադրությամբ կատարում:
3. որ ժող. և կոմպոզիտորական ստեղծագործությունները նման կարող են լինել իրենց տրամադրությամբ, բնույթով, արտահայտչամիջոցներով, և տարբեր են, քանի որ ստեղծվում են մեկը ժողովրդի, մյուսը՝ կոմպոզիտորի կողմից:
4. որ կան մանկական հարվածային և բնական նվագարաններ, որոնցով կարող ենք ռիթմական նվագակցություն իրականացնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)

1. Թվարկել 1-2 անցած ժող. և կոմպոզիտորական երգեր, պարեր, քայլերգեր՝ ներկայացնելով դրանք համապատասխան կերպարայնությամբ, պարային և ռիթմիկ շարժումներով:
2. Ներկայացնել երաժշտական արտահայտչամիջոցները՝ ռիթմ (կարճ և երկար տևողություններ), տեմպ (դանդաղ, միջին, արագ), ուժգնություն (ուժեղ, մեղմ, հանգիստ)՝ անցած կատարումներից 1-2ը համապատասխան արտահայտչամիջոցների կիրառմամբ կատարելով:
3. 1-2 ժող. և կոմպոզիտորական կատարումներ ներկայացնել՝ բացատրելով նրանց նման և տարբեր լինելու կարևոր պայմանը:
4. Հարվածային մանկական նվագարաններով՝ դափ, շրխկան, թմբուկ, կաստանետ...կատարել երգի կատարմանը համապատասխան նվագակցություն: